

Թեև մեզ սպանեցին, բայց հայրենիքը մեր մեջ չսպանվեց

Մարգարյան Սուրեն Թ.

պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

sargsyansuren@yandex.ru

EDN: BCWWPP

Ով ապրում է վահի մեջ՝ նա մահանում է վահից:

Լեոնարդո Դա Վինչի

Ով պատմություն ունի՝ չի կարող ետ չնայել: Ով անցյալ ունի՝ չի կարող հիշողություն չունենալ: Իսկ ինչպես մեծն Նժդեհն էր ասում՝ անցյալը մոռացողին պատժում է ապագան: Վերջին շրջանում մեր հանրությանը ցնցող սուր հիմնախնդիրները զարմանալիորեն կամ գուցե օրինաչափորեն կենտրոնացած են Հայրենիք և Պետություն հասկացությունների շուրջ: Հավանաբար ժամանակներն այնպիսին են, որ մեզինքն յուրաքանչյուրը կամ գոնե շատերը պարտավոր են իրենց համար նորից ճշգրտել մեր ինքնության հիմնական ցուցիչները, մեր ընկալումները մեր Հայրենիքի և մեր Պետության մասին: Բնավ չհավակնելով գիտական վերջնական ճշգրտության, շարքային հայ պատմաբանի իրավունքով, կարող եմ ներկայացնել իմ ընկալումներն **Հայրենիքի** մասին: Դա այն տարածքն է, որի վրա ձևավորվել է հայ ժողովուրդը, ապրել իր կենսագրությունը, ստեղծել իր հոգևոր և նյութական մշակույթը: Ավելին՝ վավերացրել է իր ներկայությունը համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ: Մեր **պետությունը**, որ մեր ժողովրդի ինքնակազմակերպման բարձրագույն ձևն է (ինչպես ցանկացած այլ ժողովրդների դեպքում) և մեզ համար բարձրագույն արժեք է, ցավոք, այս անգամ, պատմական դեպքերի բերումով, կայացել է մեր Հայրենիքի սուկ մի փոքրիկ մասի վրա: Հետևաբար կարծում եմ, որ **սա առիթ չէ Պետությունն ու Հայրենիքը հակադրելու կամ Հայրենիքից հրաժարվելու համար**: Ընդհակառակը, դրանք պետք է համադրենք, համախմբվենք այդ գաղափարի շուրջ և հարմար առիթ ներկայանալու պարագայում հասնենք դրանց նույնացման: Սա՝ անկախ տարիքից, սեռից, նյութական ու քաղաքական կարգավիճակից և բնակության վայրից, պետք է լինի յուրաքանչյուր հայի սրբազան պարտքն ու նրա համազգային պատգամը սերունդներին...

Եթե ընտանիքում խնդիրներ են լինում, այդ ընտանիքից ոչ-ոք դուրս չի գալիս «հայ-հավար» գցում, այլ աշխատում են, որ հնարավորության դեպքում իրենց տան խնդիրները «ներքին կարգով» իրենց ընտանիքի ներսում լուծեն: Պետությունը ընտանիքի մեծ տարբերակն է, և շատ ճիշտ տարբերակ է նշածս ձևով բոլոր ներքին խնդիրներին լուծում տալը: Հետևաբար բոլորովին էլ կարիք չկա, որ մեր ներքին խնդիրների լուծումը դրսերում փնտրենք, քանզի կյանքը ցույց է տալիս, որ դրանից վնասն ավելի շատ է լինելու, հետո էլ՝ բոլոր կնճռոտ հարցերը մենք մեր պետության ներսում լուծելու ռեսուրսը ունենք: Իսկ շեղումների համար հատուցման ժամը շատ մոտ է, որտեղ դատավորն էլ է տուժած Հայ Ազգը լինելու, դատավճիռ կայացնողն էլ: Մենք ու մեր ընտանիքը, ինչպես բոլոր օրգանիզմները, կույր աղիքի նման, առանց վատաբարոյի ու այլանդակի չեն լինում: Մենք էլ բացառություն չենք, և մեր ընտանիքից դուրս եկած այլադավան, այլանդակ դուրսպրծուկներն ունենք: Ուստի մեր ընտանեկան հարցերը մեկ անգամ և վերջնական, մենք պետք է լուծենք և այս դեպքում դրսից ոչ խառնվողներ են անհրաժեշտ, ոչ էլ խորհրդատուներ:

Դա վերաբերում է նաև մերօրյա այն գործընթացներին, որ Տավուշում և այլ վայրերում ժողովուրդը շարունակում է պայքարել ու դիմադրել Ադրբեջանին նոր տարածքներ նվիրելու անօրինական որոշումների դեմ: Ամեն օր դիմադրության նոր խմբեր են ստեղծվում: Կարևոր է, որ բոլորը միասին գործեն: Պարբերաբար խոսելով Տավուշի չորս գյուղերի մասին, իշխանական քարոզիչներն ասում են, որ դրանք Տավուշի գյուղերը չեն: Ակամա հարց է առաջանում՝ դուք որտեղի՞ց գիտեք: ԽՍՀՄ որևէ իրավիճակ կամ փաստաթուղթ չի կարող հիմք հանդիսանալ և չի հանդիսանում Ադրբեջանի համար, քանի որ նա իր վարքով և հայտարարություններով բազմիցս է խոսել դրա մասին և իր առաջին իսկ փաստաթղթերով, դեռևս 1991-ին, հրաժարվել է ԽՍՀՄ իրավաքաղաքական ժառանգությունից: Նորմալ մարդը, նույնիսկ մեկ տոկոս հիմք ունենալով, կասի, որ իմն է: Համենայն դեպս, հյու հնագանդ չի հանձնի տարածքը թշնամուն՝ հատկապես դա անելու համար չունենալով ոչ մի իրավունք: Կարծում եմ, որ անպատժելիությունն ամենամեծ խթանն է այս դեպքում: Իսկ հայտնի ճշմարտություն է, որ հենց անպատժելիությունն է ծնում նոր իրավախախտումներ: Հետևաբար սա այն իրողությունն է, որ յուրաքանչյուրս պետք է հասկանանք՝ խոսելու ժամանակը վաղուց անցել է: Ժողովրդին ներկայացված «արձանագրություն» կոչվող, միջազգային իրավունքում հայտնի դելիմիտացիայի (միջազգային իրավունքում փոխադարձ համա-

ձայնությամբ հարևան պետությունների պետական սահմանների սահմանագծի որոշումը քարտեզի վրա) և **դեմարկացիայի** (սահմանագծի անցկացումը երկրի մակերևույթի վրա) հետ ոչ մի կապ չունեցող փաստաթղթով չորս գյուղերի տարածքները, առանց որևէ իրական երաշխիքի, թշնամուն հանձնելուց և ըստ այդմ՝ պաշտպանության շրջան նաև հյուսիս-արևելյան սահմանում թուլացնելուց, հակառակորդին խորը թիկունք թողնելուց հետո Հայաստանն այլևս զինված ուժեր պահելու կարիք չի ունենալու, քանի որ դառնալու է բացարձակ անպաշտպանունակ երկիր: Հետևաբար բանակը պետության համար ընդամենը լինելու է ավելորդ ծախս, ինչ-որ գեներալներ կամ գեղապետներ բուծելու մի կենտրոն, իսկ թեկուզ հարաբերականորեն անվտանգ հայրենիքի մասին պարզապես երազելու ենք. թշնամին ինչ ցանկանա, երբ ցանկանա, կվերցնի: Իսկապես էլ, քանի մեր հասարակական քաղաքական միտքը հենվում է հուզականության (85-ամյա տատն է Տավուշը պաշտպանում), խորհրդապաշտության (սիմվոլիզմ) վրա (Համայանը Խուստուփում նվագում է), Փլեչնոբի (փողոց ենք փակում), ոչ թե խորը մտածված ու մշակված ռազմավարության ու գործողությունների ծրագրի վրա, մենք ոչ ավելի նպաստավոր վիճակ կունենանք, ոչ էլ առավել ևս Հայրենիք կփրկենք:

Տխուր փորձը վկայում է, որ ամեն հաջորդ հողագիջմանը հաջորդում է ազգակործան մի քարոզչություն, որը փորձում է մարդկանց ներշնչել, թե «էս էլ ու վերջ»: Սակայն ինչպես հայտնի «Չարի վերջում», իրականում այդ վերջը չկա: Աստված մի արասցե, բայց այսպես եթե շարունակվի, ապա վերջն այն կլինի, որ Երևանում կմնա նույնքան հայ, որքան Ստեփանակերտում, իսկ Էջմիածնի Մայր տաճարն էլ կհայտնվի Շուշվա Կանաչ ժամի վիճակում: Հակառակորդն արդեն չի թաքցնում, որ հաջորդ «կայարանը» Ազատամուտ և Կայան գյուղերն են, հետո՝ Տիգրանաշենը, հետո Ջիլիգա գյուղի վարչական տարածքները, հետո ապրիլի 24-ն աշխատանքային օր դարձնելը, հետո թուրքերի բնակեցումը Հայաստանում և այդպես շարունակ: Այնպես որ, բոլորս պետք է ըմբռնենք, որ սա քաղաքական խնդիր է և կոչվում է սողալու մարտավարությամբ թուրքերի կողմից Հայաստանի գրավում: Ուստի ազգովին համախմբվել է անհրաժեշտ, որպեսզի հնարավոր դառնա պատնեշել այդ նենգաբարո առաջխաղացմը:

Նշանավոր գրող Նար-Դոսը կարծես մերօրյա տխուր իրադարձությունների մասին էր միանգամայն իրավացիորեն նշում, որ գրականությունը կյանքի հայելին է, բայց միայն դրանով չի սահմանափակվում նրա դերը. նա կյանքի դպրոցն էլ է: Հայելու մեջ ցույց է տալիս ինձ, որ ճակատիս մուր է քսված, բայց միջոց էլ է սովորեցնում այդ մուրը սրբելու: Բավական չէ, որ գրականությունը ցույց տա միայն այն, ինչ որ կա կյանքի մեջ. պետք է նա ցույց տա և այն, ինչ որ չկա և ինչ որ ցանկալի է, որ լինի: Իսկապես, շատ ցավոտ է, բայց անտրամաբանականության գազաթնակետն է սա: Թշնամին տոնում է սահմանագատում ասվածը: Տոնում՝ բառիս բուն իմաստով, քանի որ առանց որևէ ջանք գործադրելու և անխնդիր, անգամ բանավոր ոչ մի պարտավորություն ինքն իր համար չսահմանելով՝ գալու է կանգնի այնտեղ, որտեղ ցանկանում է: Իսկ աշխարհն էլ ողջունում է այն, ինչը տոնում է թշնամին: Ավելին, պարզվում է, որ վատ ու հակապետական են նրանք, ովքեր չեն ողջունում և ուրախանում, որ թշնամին տոնում է կատարվածը:

Տարածք կորցնելն, անկասկած, բոլորի համար էլ ցավոտ գործընթաց է: Իսկ մեզ համար՝ առավել, քանի որ այն ընթացավ Հայոց ցեղասպանության տարեկիցի օրերին: Տրամաբանությունը հուշում է, որ ցեղասպանության գոհերի հարգանքի լավագույն ձևն այդ կատարված իրողությունը կասկածի չենթարկելը, նոր ցեղասպանության բացառումն է և հայկական տարածքների՝ մեր հայրենիքի փրկությունը: Նույնիսկ թուրք պատմաբան Թաներ Աքչամն է շեշտում, որ Հայոց ցեղասպանությունն իսկական ցեղասպանություն է և ոչ թե ջարդ, սպանություն կամ մեկ այլ բան: Եթե 1915-ին տեղի ունեցածը ցեղասպանություն չանվանենք,-գրում է նա,-ապա այդ դեպքում պետք է ասել, որ որևէ ցեղասպանություն չի եղել աշխարհում: Սա է տրամաբանությունը. Իրերը պետք է անվանվեն իրենց անուններով: Իսկ մենք վերջերս կարծես թե մոռանում ու չենք պահում մեր՝ երբեք չմոռանալ Հայոց ցեղասպանությունը խոստումը: Հուսադրող է, թերևս այն, որ «Մեր հայրենիքում թեև մեզ սպանեցին, բայց հայրենիքը մեր մեջ չսպանվեց...»: Եվ եթե մեկը փորձի ջնջել մեր պատմական հիշողությունը կամ կասկածի տակ առնել Հայոց Ցեղասպանության իսկությունը, նզովյալ կլինի սերնդեսերունդ: Հետո էլ, ով կփորձի խարխլել հայոց ընտանիքի հիմքերը, զրկված կմնա ընտանեկան հարկից ու ընտանեկան ջերմությունից: Վերջապես, ով հրաժարվում է հայրենի հողերից, եղբայրասպան Կայենի նման աստանդական պիտի դառնա...:

Կրկին ուզում եմ ընդգծել, որ այսօր ավելի քան երբևէ, մեզ համար կարևորվել է Հայոց պատմությունը լավ սերտելու և սերունդներին ավանդելու գործը, քանզի արդի մարտահրավերների խորապատկերի վրա հանցագործներն ավելի ու ավելի լկտի կեցվածքով պահանջներ են

ներկայացնում և ցեղասպանությունը մերժելու փորձեր են կատարում: Իսկ քանի որ ցեղասպանությունն իրագործած դահիճների կողմից սպառնալիք կա հիմնովին նենգափոխելու պատմությունը և այն հանցագործների պահանջներին համապատասխան կարելու, հետևապես պիտի լծվենք կարևորագույն գործին՝ ամեն մեկս մեր չափով և մեր տեղում մեր ինքնությունը պահպանելու, որպեսզի մերժենք, խոսքով և գործով հերքենք ամեն մի փորձ, ում կողմից էլ, որ դա լինի և թույլ չտանք ժխտողականության հետևորդների շարքերի խտացում:

Մեկընդմիջտ հասկանանք, որ աշխարհի հզորները դրա ձևավորման պահից սկսած Հայկական խնդիրն օգտագործել և օգտագործում են բացառապես հօգուտ իրենց շահերի: Ահավասիկ, Եվրախորհրդի ղեկավար Շարլ Միշելը, ԱՄՆ-ի պետքարտուղար Բլինքենը, Ուրսուլա Ֆոն Դեր Լեյենը, Շոլցը, Մակրոնը, Պուտինը ու մնացած բոլորը ինչի չգիտե՞ն, որ ՀՀ վարչապետն իրավունք չունի ինքնագլուխ առանց հանրաքվեի սահմաններ գծի, ինքնագլուխ, բոլորից թաքուն կապիտուլյացիա ստորագրի, որ նրա շատ քայլեր անօրինական են, բայց չտեսնելու են տալիս ու դեռ դրա ստորագրածների ու որոշումների հենքով էլ մեր ապագան են գծում, քանի որ ակնհայտորեն դա իրենց է ձեռնտու: Ավելին, կիսաթաքուն հորդորում են մեր իշխանություններին, որ հրաժարվեն եղեռնից և այլ ցավալի իրողություններ: Կրկին օդում կախվում է արդեն մի քանիդարյա հարցը. այսքանից հետո դեռ կասկածող կա՞, որ մեզ հատուկ չեն ոչընչացնում: Ակամա մտածում ես նաև, որ աշխարհի տիրակալներն ինչի՞ պիտի ձեն հանեն: Եթե մեր իշխանություններն ասում են, թե մի խառնվեք մեր ու ազերիների գործերին ու հոժարակամ հողեր են զիջում, իսկ առանց այդ էլ խիստ լարված Աշխարհին լարվածության նոր օջախներ պետք չեն, քանզի առայժմ Ուկրաինան ու Իսրայելը իրենց լիովի բավական է: Ստիպված եմ մեկ անգամ ևս հուշել, հորդորել, հարկավոր է սթափվել, հույսներս միայն մեզ վրա դնել, որպեսզի կարողանանք պատմական այս բարդ և հուզումնառատ շրջանից պատվով ու հնարավորինս քիչ կորուստներով դուրս գալ:

1-30.04.2024

*Сдана / Հանձնվել է՝ 30.04.2025
Рецензирована / Գրախոսվել է՝ 05.05.2025
Принята / Ընդունվել է՝ 12.05.2025*